Digitally signed by MIKAYELYAN LUSINE
6503740131
Date: 2023.10.19 13:05:12 AMT

«ՀՀ Լոռու մարզի Հովհ. Թումանյանի անվան № 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

II բ դասարանի

2023-2024թ ուստարվա

ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

տնօրեն՝ Լ. Միքայելյան

դասվար՝ Ա. Պարանյան

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝
ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

Տարրական դպրոցում դասարանի ղեկավարը՝ դասվարը՝

- *դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.*
- *նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ.*
- *անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.*
- *իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.*
- *կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.*
- *հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը.*
- *արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի վտանգ պարունակող, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:*

Աշխատանքային պլանը կազմելիս պետք է՝

ա/ Ներկայացնել դասարանի ընդհանուր բնութագիրը

- *աշակերտների ընդհանուր քանակը/աղջիկ, տղա/*
- *աշակերտների և նրանց ընտանիքների սոցիալական վիճակը,*
- *տվյալներ նրանց առողջության և ֆիզիկական զարգացման մասին,*
- *ճանաչողական հմտություններ (ուշադրության, հիշողության, պատկերացման, մտածողության առանձնահատկություններ),*
- *զգացմունքակամային և պահանջարկամոտիվացիոն շրջանակներ (անհատի ուղղվածությունը, հետաքրքրությունները, հարաբերությունները, արժեքային համակարգը),*
- *աշակերտների վարքը, արարքները:*
- *աշակերտների գիտելիքների մակարդակը,*
- *հոգեբանական և սոցիալական զարգացման մակարդակը, որը համապատասխանում է ուսումնադաստիարակչական գործընթացի երեք ֆունկցիաներին. ուսուցանող, դաստիարակող և զարգացնող:*
- *Դրանից բացի՝ դասղեկը/մանկավարժը/ ուսումնասիրում է դասարանը որպես խումբ, կոլեկտիվ. դասարանում միջանձնային հարաբերությունները,*

համախմբվածությունը, հասարակական կարծիքը, արժեքների միասնականությունը և այլն…

- *Հարցաթերթերի և այլ հարցման մեթոդների միջոցով հնարավոր է հավաքագրել տարբեր տեղեկություններ՝ աշակերտների գործունեության դրդապատճառների, անհատական որակների և արժեքային կողմնորոշումների մասին: Հարցաթերթերը լինում են բաց (աշակերտը ազատ ընտրում է պատասխանը) և փակ (պետք է ընտրել տրված պատասխաններից որևէ մեկը): Հարցաթերթի կազմումը բարդ աշխատանք է:*

բ/ Նախորդ տարվա աշխատանքային պլանի համառոտ վերլուծությունը,

գ/ Հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն,

դ/ Նոր ուսումնական տարվա աշխատանքային պլանի նպատակը և խնդիրները:

ե/ Աշխատանքային պլանի կազման հիմնական ուղղությունները /կազմակերպչական աշխատանք, աշխատանքային դաստիարակություն, գնահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում, անվտանգ երթևեկություն, աշխատանք ծնողների հետ, առողջ ապրելակերպ, ես քաղաքացին եմ Հայաստանի/ :

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ՝
ԸՍՏ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դասղեկի գործունեության ոլորտները	***սեպտեմբեր***	***հոկտեմբեր***
1. Կազմակերպչական աշխատանք	*1. Աշխատանքային պլանի կազմում:* *2. Դասրանի ակտիվի ընտրություն:* *3. Դասրանում հերթապահության կազմում:* *4. Դասրանական անկյան ձևավորում:* *5. Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին:* *6. Օգնել աշակերտներին արտադասարանական խմբակներում ընդգրկվելուն:*	*1. Դասրանում հերթապահության կազմակերպում:* *2. Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում:* *3. Մասնակցություն դպրոցի փորձնական տարհանման աշխատանքներին:* *4.Դասարանի սոցիալապես անապահով երեխաների ցուցակ կազմում:*
2.Աշխատանքային դաստիարակություն	*1. Դասասենյակի կանաչապատում, ծաղիկների խնամք:* *2. Դասրանի սանիտարական վիճակի պահպանում, հերթապահություն դասարանում:* *3. Մասնակցություն բակի և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին/շաբաթօրյակ/:*	*1.Դասասենյակի հիմնավոր մաքրում:* *2.Դասասենյակը նախապատրաստել ջեռուցման շրջանին /սեզոնին/:* *3.Ծաղիկների խնամք:*
3.Գնահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում.	*1. <<Եկեք ծանոթանանք>> դաս./ժամ* *2. <<Աշնանային պարահանդես>>,- ստեղծագործում են երեխաները:* *3.<<Առողջության օր>>,-մեզ հյուր են եկել բժիշկները:* *4.<<Ովքեր են իմ ընկերները, ի՞նչն եմ կարևորում ընկերության մեջ>>դաս/ժամ:*	*1. Մասնակցություն <<Ուսուցչի օրը>> դպրոցում տոնակատարությանը:* *2. Կապակցված խոսքի զարգացում՝ <<Երջանիկ դիպված>>դաս/ժամ:* *3.<<Իմ աշակերտական սեղանի նոր ընկերը>> դաս/ժամ:*
4.Անվտանգ երթևեկության	*1.<<Անվտանգ երթևեկության>> կանոնների հիշեցում:* *2.<<Անվտանգ երթևեկություն>> անկյան պատրաստում*	*<< Անվտանգ երթևեկության կանոններ>> տեսաֆիլմի դիտում:*

5.Աշխատանք ծնողների հետ	1. Անհատական զրույց ծնողների հետ: 2. Ծնողների ներգրավումը դաստիարակչական աշխատանքներում՝ ծնող-ուսուցող, ծնող- խորհրդատու:	1. Ծնողական ժողով՝ ա/<< Եկեք ծանոթանանք,ծնող, դասարանի ղեկավար, առարկայի ուսուցիչ>>: բ/<<Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ>>:
6.Առողջ ապրելակերպ	1.<<Քո առողջությունը. անձնական հիգիենա>> դաս./ժամ 2. <<Կրակի հետ չի կարելի խաղալ>>-դաս/ժամ	1. <<Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի>>դաս/ժամ: 2.<<Ինչո՞ւ է անհրաժեշտ օդափոխել սենյակը>>դ/ժ
Ես քաղաքացին եմ Հայաստանի	1.<<Մենք՝մենք Հայկի թոռներն ենք>>դաս/ժամ	1.<<Մենք- մենք հայ ենք>>դ/ժ 2.Էքսկուրսիա՝ <<Իմ ծննդավայրը>>:

Դասղեկի գործունեության ոլորտները	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1. Կազմակերպչական աշխատանք	1.Հերթապահության կազմակերպում: 2. Դպրոցական դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակի ստուգում:	1. Դասարանական ակտիվի նիստ: 2. Դասարանական անկյան ձևավորում:
2.Աշխատանքային դաստիարակություն	1. Հերթապահություն դասա-Սենյակում: 2.Ծաղիկների խնամք, նախապատրաստում ձմռանը:	1. Դասասենյակի հիմնավոր մաքրում: 2. Հերթապահություն դասա-Սենյակում: 3.Դասասենյակի նախապատրաստումը Նոր տարվա:
3.Գիահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում.	1. Մրցույթ-խաղ՝ <<Սպորտլանդիա>>: 2. <<Մայրիկի օրը>> մեր ընտանիքում: 3. <<Սովորենք իրար հասկանալ>> դաս/ժամ: 4. <<Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս և ինչո՞ւ>>դաս/ժամ:	1. Անվտանգ երթևեկության շաբաթի կազմակերպում: 2.Նոր տարվա տոնակատարության նախապատրաստում: 3. Պատի թերթի լույս ընծայում՝<<Ուրախ դիմավորենք Ամանորը>>: 4. Դիմակահանդեսի կազմակերպում: 5.<<Պահպանենք վարվեցողության

		կանոնները>>դաս/ժամ: 6.<<Մեր ընտանի կենդանիները>> դաս/ժամ:
4.Անվտանգ երթևեկության	1. Ուսուցողական խաղ՝<<Ճանապարհային երթևեկություն>>:	1.Ծանոթանանք՝ <<Ճանապարհային երթևեկության նշաններ>>:
5.Աշխատանք ծնողների հետ	1.Այցելություն ռիսկային խմբի երեխաների ծնողներին: 2.Անհատական աշխատանք ծնողների հետ: 3.Համադպրոցական ծնողական ժողով:	1 Այցելություն աշակերտների ընտանիքներ, մտերմիկ զրույց ծնողների հետ: 2Ծնողական ժողով՝<< Ինչո՞ւ են մեր երեխաները խաբում>>: Աշակերտների առաջադիմության գնահատում:
6.Առողջ ապրելակերպ	1.Զրույց՝<<Գազը վտանգավոր կարող է լինել, երե չգիտես նրանից օգտվելու կանոնները>> դաս/ժամ: 2.Զրույց՝<<Սպորտը երեխայի կյանքում>>:	1.Զրույց՝<<Մենք առողջ ապրելակերպի կողմնակից ենք>>դաս/ժամ: 2. Աշակերտներին նախապատրաստել ձմեռային արձակուրդներին:
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	1.<<Մեր ազգային հերոսները /Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան/>>դաս/ժամ:	1.Մեր խորհրդանիշներ՝դրոշ, զինգնշան և հիմն:Դաս/ժամ

Դասղեկի գործունեության ոլորտները	Հունվար	Փետրվար
1. Կազմակերպչական աշխատանք	1.Դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակի ստուգում: 2.Դասարանական հերթապահության կազմակերպում:	1.Նիստ դասարանական ակտիվի հետ: 2. Հարստացնել դասարանական անկյունը:
2.Աշխատանքային դաստիարակություն	1.Դասգրքերի վերանորոգում: 2.Հերթապահություն դասարանում:	1.Դասասենյակի հիմնավոր մաքրում: 2. Հերթապահություն դասարանում:

3.Գիահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում	1.<<Իրավունք և պարտականություն>>/դաս./ժամ: 2.Լավագույն պաստառի ստեղծում՝<<Պայքարենք վտանգավոր սովորությների դեմ>> 3.Զմեռային նկարների տոնավաճառ/ դպրոցականի անկյուն/:	1.Մասնակցություն՝ << Զմեռային խաղեր և ավանդական սովորությներ>> միջոցառմանը: 2.Դաս/ժամ՝ <<Պահպանենք բնությունը- պահպանենք կյանքը>>:
4.Անվտանգ երթևեկության	Դաս/ժամ՝<< Երթևեկության անվտանգությունն են երազում աշխարհի մեծերն ու փոքրերը>>:	1.Երթևեկության կանոնները երեխաների խմբերով անցնելու դեպքում:
5.Աշխատանք ծնողների հետ	1. Անհատական աշխատանք ծնողների հետ: Այցելություն աշակերտների ընտանիքները:	1.Ծնողական ժողով՝ ա/<<Վատ սովորություններ, ինչպես պայքարել դրանց դեմ>>: բ/<<Հայրիկների դերը երեխաների դաստիարակության գործում>>:
6.Առողջ ապրելակերպ	Ճշգրիտ օգտվենք օրվա ռեժիմից:	1.Դաս-ժամ՝<<Օրվա ռեժիմը և առողջությունը>>:
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	1. Միջոցառում՝<<Ես զինվորն եմ իմ հայրենիքի>>- բանակի տոնին ընդառաջ:	1.<<Հայրենիքը սկսվում է իմ տնից>>դաս/ժամ:

Դասղեկի գործունեության ոլորտները	***Մարտ***	***Ապրիլ***
1. Կազմակերպչական աշխատանք	Դասագրքերի վիճակի ստուգում:	Աշակերտների տետրերի և օրագրերի վիճակի ստուգում:
2.Աշխատանքային դաստիարակություն	1.Դասասենյակի հիմնավոր մաքրում: 1.Հերթապահություն դասասենյակում: 3.Զրույց՝<<Խնամքով օգտագործենք դասագրքերը>>: Հերթապահություն դասասենյակում:	1.Հերթապահություն դասասենյակում: 2.Շաբաթօրյակ բակում և դպրոցամերձ տարածքում: 3. Դասասենյակի կանաչապատում:
3.Գնահատող-կողմնորոշող	1.	1.Միջոցառում՝<< Մեր

գործունեություն և ազատ շփում.	Դաս/շամ՝<,Ստուգաբանենք մեր դասարանի աղջիկների անունները>>: 2.<<Պահպանենք բնությունը, պահպանենք կյանքը>> դաս/ժամ: 3.Դաս/ժամ՝<<Օգնիր ընկերոջդ մեծահոգաբար>>:Հ	շրջապատի թռչունները>>/Թռչնի օր/: 2. Դասղեկի ժամ՝<<Սիրելի գրքի էջերով>>: 3. <<Ճանապարհորդություն արևավառ ծաղիկների աշխարհում>>դաս/շամ:
4.Անվտանգ երթևեկության	Ճանապարհին՝մարդիկ, մեքենաներ, կանոններ:	Ժամանակակից տրանսպորտ-վտանգի մեծ և անկանխատեսելի աղբյուր:
5.Աշխատանք ծնողների հետ	1.Զրույց ռիսկային խմբի երեխաների ծնողների հետ: 2.Անհատական աշխատանք ծնողների հետ: 3. Տոնական համերգ՝ նվիրված մայրիկների տոնին:	Ծնողական ժողով՝<<Ընդլայնենք երեխաների հետաքրքրությունների շրջանակը>>:
6.Առողջ ապրելակերպ	Հրահանգներ գարնանային արձակուրդներին:	Էքսկուրսիա՝ <<Մեր շրջապատի բնության հրաշքները>>:
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	Դաս/ժամ՝ <<Մեր ընտանիքի բարոյախրատական դասերը>>:	1.Բանավեճ՝,,Պահպանենք բնությունը- պահպանենք առողջությունը>>:

Դասղեկի գործունեության ոլորտները	Մայիս
1. Կազմակերպչական աշխատանք	Դասագրքերը նախապատրաստել դպրոցի գրադարանին հանձնելու:
	1.Հերթապահություն դասարանում: 2.Մասնակցել դպրոցամերձ տարածքի բարեկարգման շաբաթօրյակին: 3. Դասասենյակի հիմնավոր մաքրում: 4. Գթասրտության այցեր:
3.Գիահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում.	1.Հանդիսավոր տողան՝ << Հայրենիքի՝ նահատակներ, խոնարհվում ենք ձեր առաջ>>: 2.
4.Անվտանգ երթևեկության	
5.Աշխատանք ծնողների հետ	1.Օգնություն ծնողներին՝<<Ամառային արձակուրդներին>>: 2. Համատեղ ծնողական ժողով /ծնող, աշակերտ, ուսուցիչ/: Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում ,

	շնորհակալագրերի հանձնում:
6.Առողջ ապրելակերպ	
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	Միջոցառում՝<< Հաղթանակների մայիս՝ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել>>

Փաստաթղթերի ցանկ, որոնք ստեղծվում, լրացվում և վարվում են դասղեկի կողմից

1. Դաստիարակչական գործունեության պլան՝
   -Միջոցառումների համալիր ծրագիր, որտեղ ներկայացված են դաստիարակության բոլոր ուղղություններով իրականացվող աշխատանքները,
   - Միջոցառումների օրացուցային պլան:
2. Ուսուցիչների հետ համագործակցային աշխատանքի պլան:
3. Դասրանի սոցիալապես անապահով երեխաների ցուցակ և աշխատանքների պլան:
4. Դասալսումների մատյան՝ դասի վերլուծության վերաբերյալ գրառումներ ուսուցչի հետ համատեղ:
5. Ծնողական ժողովների անցկացման պլան/թեմատիկա և ժամանակացույց/:
6. Ամենօրյա աշխատանքների կատարման գրանցումների մատյան:

ԿԱՒ-ի Արագածոտնի մասնաճյուղի մասնագետ՝ Ս. Մուսայելյան

Դասղեկի ընդհանուր բնութագիրը

1. Դասղեկի բարեկրթության չափանիշ է հանդիսանում նրբանկատությունը, ի հակադրություն կոպտության, աննրբանկատության:
2. Դասղեկը պետք է լինի խիստ, բայց բարի և անաչառ:
3. Եթե դասղեկն ուզում է, որ իրեն հարգեն, առաջին հերթին ինքը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը:
4. Նախքան ուրիշներից ուշադրություն պահանջելը, դասղեկն ինքը պետք է ուշադիր լինի իրեն շրջապատողների հանդեպ, հասկանա նրանց շահերը, կարիքներն ու պահանջները:

Պետք է ունենա

1. Ներքին ազատություն
2. Մտածելակերպի, վարքի ազատ ընտրություն
3. Սեփական արարքների հնարավոր հետևանքների համար լիարժեք պատասխանատվության գիտակցում

Պետք է կարողանա

1. Պլանավորել իր մասնագիտական գործունեությունը

2. *Վերլուծել և կանխատեսել իր գործունեության արդյունքները*
3. *Աջակցել յուրաքանչյուր աշակերտի՝ որպես անհատ ձևավորմանը*
4. *Աշակերտներին սովորեցնել վերլուծել իրենց արտառուսումնական գործունեությունը*
5. *Կապեր հաստատել աշակերտների ծնողների, առարկայական ուսուցիչների և հասարակության հետ*

Ինչն է ամենակարևորը դասղեկի համար՝ երեխաների հետ շփման մեջ

- *Բարությունը (իհարկե բարությունն առանց պահանջկոտության՝ թակարդ է մանկավարժի համար, բայց պարզվում է, որ երեխաների համար դա դասղեկի ամենակարևոր հատկանիշն է: Գուցե երեխաները հոգնե՞լ են անդադար վերահսկումից և պահանջներից, և նրանց պետք են պարզ մարդկային զգացումներ),*
- *ուշադրությունը,*
- *հոգատարությունը*
- *իրենց հասկանալը,*
- *կարեկից, արձագանքող վերաբերմունքը,*
- *շփման համար բաց լինելը,*
- *բարեհամբույր լինելը,*
- *պատասխանատվությունը,*
- *մարդասիրությունը,*
- *անկեղծությունը,*
- *հումորի զգացումը,*
- *լրջությունը,*
- *հավասարակշռվածությունը,*
- *արդարամտությունը,*
- *նպատակասլացությունը,*
- *ժամանակակից լինելը:*

Ինչն է ամենակարևորը դասղեկի համար՝ ծնողների հետ շփման մեջ

- *ազնվությունն ու արդարամտությունը*
- *համբերատար լնելը*
- *հանգստությունը*
- *բարեկրթությունը*
- *նրբանկատությունը*

Դասղեկ լինել՝ նշանակում է:

- *մեծ պատասխանատվություն կրել,*
- *կարողանալ լսել և հասկանալ,*
- *հոգ տանել դասարանի յուրաքանչյուր աշակերտի մասին՝ նրա հոգեկան, ֆիզիկական և բարոյական վիճակի մասին,*
- *աջակցել (ուսման, դասարանի, ծնողների և շրջակա սոցիումի հետ շփման մեջ, ինքնաբացահայտման և ինքնազարգացման մեջ),*
- *ղեկավարել և կարգուկանոն պահպանել,*
- *փոխարինել ծնողներին, ավագ ընկերոջը (եթե դրա կարքը կա),*
- *արդարամիտ լինել:*

Խորհուրդներ դասղեկին

- *Հիշեք, որ յուրաքանչյուր երեխա իր հետաքրքրությունները, ուրախություններն ու տխրությունները՝ իր ներաշխարհն ունի, կպչուն մի եղեք:*
- *Քանի դեռ ճշմարտությունը չեք պարզել, հանգստություն պահպանեք:*
- *Մտեք երեխայի դրության մեջ, փորձեք հասկանալ, թե ինչ է նա զգում, հետո նոր միայն որոշեք՝ ինչ անել:*
- *Լավ ու բարի արարքներ գործեք, նրանք մեզանից են սովորում:*
- *Այնպես արեք որ երեխայի համար հաճելի լինի ձեզ հետ շփվելը. գովեք, ընդգծեք հաջողությունները, ոգեշնչեք նրան:*
- *Ավելի շատ ինքնուրույնություն և ընտրելու իրավունք տվեք:*
- *Ուշադիր եղեք: Չափավորեք ձեր սպասելիքները, մի մոռացեք, որ նրանք այնուամենայնիվ դեռ երեխա են:*
- *Խուսափեք մեղադրելուց:*
- *Մի° մեծամտացեք: Ընդունեք, որ դուք էլ ինչ-որ բան չգիտեք:*
- *Մի° սահմանափակեք ձեր երևակայությունը, մի° վախեցեք անսովոր երևալուց:*
- *Մի° համեմատվեք այլ ուսուցիչների հետ: Փոխարենը համեմատեք ինքներդ ձեզ՝ երեկ և այսօր:*